ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4865-Ա « 02 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի Հ.2234-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

1.Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 7-ի «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն,Դավթաշեն, Արաբկիր վարչական շրջաններով անցնող մի շարք փողոցներում հասարակական տրանսպորտի նոր կանգառատեղեր սահմանելու և հին կանգառները վերականգնելու մասին» հ.2234-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) հ.3 հավելվածի ցանկի 14-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

- «Ա.Ավետիսյան փողոց, Ավետիսյան - Գյուլբենկյան փողոցների խաչմերուկից 7մ դեպի հ.36 շենքի ուղղությամբ»:

2) հ.3 հավելվածի ցանկը լրացնել 17-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«17.Գյուլբենկյան փողոց,

- Գյուլբենկյան փողոց, հ.27/1 հասցեի հարակից ճանապարհահատված»:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի ու ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ